

Գ. Գ. Հարությունյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՏՈՂՄԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԳԱՆՎԱՆ ՓՈՓՈԽՈՒՄԸ

Ստորև զետեղվող նորահայտ փաստաթուղթը շափազանց ուշագրավ վա-
վերագիր է Հովհաննես Այվազովսկու մասին: Փաստաթուղթը 1817 թ. հուլիսից
մինչև դեկտեմբերը Կաֆայում-Քեոդոսիայում ծնված հայ այն երեխաների
մկրտության ցուցակն է, որոնց մկրտել և օրավուր տոմարագրել է Տեր Մկր-
տիչ քահանան: Այդ փաստաթղթում ի շարս լայնց թվում գրանցված է նաև
հոշակավոր նկարչի մկրտությունը. «Հուլիս 17 Գէորգ Այվազեանի որդի Յո-
հաննեսն»:

Նախքան Գեորգ Այվազյանի անվան և աղզանվան վերափոխմանն անդ-
րադառնալը, հարկ է նշել, որ Այվազովսկու կենսագրության շուրջը շատ են
գրվել թե՛ նախասովետական և թե՛ սովետական շրջանում՝ ներառյալ նաև
արտասահմանյան պարբերական հրատարակությունները: Սակայն ցավոք,
պետք է նշել, որ անգամ Այվազովսկիագետների աշխատություններում իսկ
բացակայում են մեծ ծովանկարչի, ինչպես նախնիների, այնպես էլ հենց իրեն
վերաբերող մի շարք կարևոր տվյալներ:

Այսպես, տակավին 1878 թ. «Русская старина» հանդեսի մի քանի հա-
մարներում զետեղված «Այվազովսկու բերանացի պատմածների հիման վրա
հորինված և հնարավորին չափ ժամանակագրական ստույգ կարգով դասավոր-
ված ինքնակենսագրականը» իր մեջ պարունակում է կենսագրողի՝ Կարատի-
գինի կողմից հորինված, մտացածին, հիմքից զուրկ, նույնիսկ ծիծաղաշարժ
մի քանի պատումներ, որոնք խեղաթյուրում են հանճարեղ նկարչի և նրա
նախնիների ծագումը: Հովհաննես Այվազովսկին քանիցս բողոքել է իր հա-
րազատներին ու հայրենակիցներին այդ միտումնավոր նենգափոխությունների
դեմ: Հիշյալ կենսագրականում գրված է. «Այվազովսկիները անցյալ դարում
(XVII դ. Գ. Հ.) Թուրքիայից գաղթել են Գալիցիա»: Խեղաթյուրելով պատմա-
կան փաստերը, հեղինակն ավելի առաջ է անցնում, հայտարարելով. «Ի. Կ.
Այվազովսկու նախնիները եղել են թուրքահայատակ և Ղուրանի հետևորդներ»:
Ապա, վկայակոչելով ոմն կոմսուհի Անտոնինա Բլուդովային, նշում է, թե
վերջինս «Իվան Կոստանտինովիչին ասել է, որ ինքը մի հին գրքում կարդա-
ցել է այդ միջադեպի մասին՝ Այվազովսկիների ընտանեկան ավանդություննե-
րից քաղված»: Այսպիսով դուրս է գալիս, որ Այվազովսկիները տեղյակ չեն
եղել նույնիսկ իրենց «ընտանեկան ավանդություններին», և որ այդ մասին
կոմսուհին է կարդացել, ինչ որ «մի հին գրքում» ու պատմել նկարչին: Հայտ-
նի է, որ նկարչի եղբայր Գաբրիել Այվազովսկին ժամանակի համբավավոր
դիտնական ու հրապարակախոս լինելով գրել է մի շարք աշխատություններ,
որոնց թվում հատկապես Օսմանյան կայսրության մասին եռահատոր ընդար-

ձակ պատմություն և տարիներ շարունակ նյութեր էր ժողովել իրենց տոհմի ծագումնաբանության ու ճյուղագրության պատմության լույս ընծայման համար: Այդ փաստաթղթերի մի որոշ մասը պահվում է Հայաստանի պետական կենտրոնական պատմական արխիվում և չափազանց կարևոր են Այվազովսկիների և նրանց նախնիների պատմությամբ զբաղվողների համար: Նկարչի մահից հետո, նրա ստեղծագործություններին նվիրված աշխատությունների մի քանիսի հեղինակները սանձազերծվեցին այն աստիճան, որ նրա հայ լինելը ժխտեցին, նույնիսկ ամոթ համարեցին նրան հայ անվանելը՝

Այսպես, ցարական մեծապետական շովինիստ Կուզմինի «Այվազովսկին և նրա ստեղծագործությունները» (1901 թ.) գրքի նախաբանում գրված է. «Այվազովսկու երակներում հոսում էր թուրքական արյուն, շնայած չգիտես ինչու մեզ մոտ ընդունված էր նրան համարել զտարյուն հայ»¹:

Այսպիսի վերաբերմունքը թերևս հասկանալի էր այն ժամանակ, երբ ցարական սատրապ իշխան Գալիցինը դաշնակցած «կարմիր սուլթան ու մեծ մարզասպանի» հետ, ամեն տեսակ մրուր էր նետում հայ ժողովրդի վրա և նրա զավակներին հալածում ու բանտերը լցնում: Ընդ սրում, այդ նույն պահին իշխանի ձայնափող գրչակները փառաբանելով թուրք ենիչերիների «բարեմասնությունները» գրչի մեկ հարվածով նրանց «քաղաքակրթությանն» էին հանձնում արվեստի համաշխարհային հռչակի ու փառքի տիրացած հայ ժողովրդի հանճարեղ զավակ Հովհաննես Այվազովսկուն: Սակայն, ցավալին այն է, որ Կարատիգինի և Կուզմինի այդ ստահոգ հաղորդումներն ըստ պատշաճի չեն հերքվել սովետական արվեստաբան-պատմաբանների կողմից: Ավելին, այդ հերյուրանքներն ավելի գունազարդվել ու լույս են ընծայվել Ն. Բարսամովի «Իվան Կոստանտինովիչ Այվազովսկի» կյանքի ու գործունեության վերաբերյալ մի քանի հրատարակություններում: Այնտեղ, սպիտակի վրա սևով գրված է. «Կ. Գ. Գայվազովսկու ծագումնաբանության մասին ճշգրիտ տեղեկություններ չեն պահպանվել: Հայտնի է, որ նրա հայրը, այսինքն նկարչի պապը եղել է թուրք: Մանկական վաղ հասակում նա պատահաբար ընկնում է հայկական ընտանիք և հետագայում ամուսնանում հայուհու հետ»²:

Այվազովսկիագիտությամբ զբաղվողների թվում պատկառելի տեղ գրավող Ն. Բարսամովի աշխատություններում, հատուկ նպատակներ հետապնդող Պ. Կարատիգինի և Կուզմինի քմահաճ, մտացածին ու հիմքից զուրկ փաստարկների գունազարդումը չափազանց տարօրինակ և նույնիսկ անհասկանալի է, ուստի չենք կարող մեր դարմանքն ու ափսոսանքը չհայտնել:

Բարսամովին պետք է վաղուց հայտնի լիներ մեծանուն արվեստագետի հայկական տոհմից սերումը և նրա հայասիրությունը: Այն ժամանակ, երբ աշխարհի տիրակալները՝ թագավորներն ու սուլթանները, ամենաբարձր շքանշաններ ու թանկարժեք ընծաներն էին հատկացնում հայրենաբաղձ նկարչին, որպեսզի նրան դայթակղեցնեին և իր ազգից հեռու վաննին, նա շենթարկվեյ նրանց քմահաճույքներին ու մնաց հայ տառապյալ ժողովրդի պաշտպանության դիրքերում: Նա իր հեղինակավոր ձայնը բարձրացրեց իր անմեղ ժողովրդի վրա սուր ճոճողների դեմ: Հայտնի է 1895—1896 թթ., իր արյունար-

¹ Н. Н. Кузьмин, Айвазовский и его произведения, СПб, 1901, стр. 1.

² Н. Барсамов, Иван Константинович Айвазовский, 1941, Государственное издательство «Искусство», Москва—Ленинград, л. 7.

բու կարմիր սուլթանը հայկական ջարդեր կազմակերպեց, ծերունի Այվազովսկու սիրտը ալեկոծվեց՝ տեսնելով իր կրծքին կախված հայ ժողովրդի յարյան մեջ լողացող սուլթանի նվիրած պատվանշանները:

Բռնակալության դեմ ի նշան բողոքի, նա բոլոր շքանշանները նետում է ծովը և ապա երիտասարդի աշխուժությամբ դնում է թուրքական հյուպատոսի մոտ ու զայրացած ասում. «Արյունակալ տիրոջը ինձի տված պատվանշանները ծովը նետեցի. ահավասիկ անոնց ժապավենները, իրեն զրկեւ եթե կուզե թող ինքն ալ իմ պատկերներս ծովը նետե, բայց հողս չէ, վասն զի անոնց փոխարժեքը ստացուած եմ»: Ու կը մեկնի:

Ահա մի էպիկոզ հայրենանվեր նկարչի կյանքից, որով բնորոշվում է Հովհաննես Այվազովսկու անսահման նվիրվածությունը հայ ժողովրդին և նրա իրավունքների պաշտպանությանը:

Հովհաննես Այվազովսկու նախապապերը սերվել են Այրարատյան նահանգի Բագրատունյաց մայրաքաղաք՝ Անիից: Ինչպես հայտնի է, Հայաստանը հանդիսացել է բարբարոս ցեղերի ու նվաճող պետությունների արշավանքների թատերաբեմ և հայ ժողովուրդը դարեր շարունակ դիմագրավել է օտար նվաճողներին՝ ջլատվել են նրա ուժերը: Հետագայում հայերի մի զգալի մասը շիրմանալով վայրագ ցեղերի պատճառած անասելի ծանր շահատակություններին ու բռնություններին, ստիպված են եղել թողնել իրենց հայրենի բնակավայրերը և ապաստան որոնել օտար հյուրընկալ հորիզոնների տակ³:

1774 թ. Քյուչուկ Կայնարջի դաշնագրությամբ, Ղրիմը դուրս է գալիս օսմանյիների վասալությունից և ճանաչվում անկախ երկիր: Երբ Ղրիմ թերակղզին անցնում է Ռուսաստանի տիրապետության տակ, ծայր է առնում այստեղից գաղթած հայերի մասսայական վերադարձը: Ներգաղթը տեղի է ունենում Մոլդավիայից, Գալիցիայից, Բուքովինայից, Լեհաստանից և այլ վայրերից:

Վավերագրերից պարզվում է, որ Հովհաննես Այվազովսկու հոր մկրտության անունը Գէորգ է: Մինչև 1817 թ. Գէորգը կրել է «Այվազյան» ազգանունը. և այդ նրանց տոհմական ազգանունը փոխանցվել է մյուս որդիներին՝ մեծ որդի Գրիգորին (որը կոչվել է պապի անունով), միջնակ որդի Գաբրիելին, կրտսեր Հովհաննեսին և երկու դստերին:

Այվազյանների ազգատոհմի ծագումնաբանության ու ճյուղագրության վերաբերյալ պահպանվել են արխիվային որոշ տվյալներ: Այրարատյան նահանգից 13-րդ դարի առաջին կեսին Ասխարա քչված հայերից՝ Ղրիմում ապաստարան գտածների հետագա սերունդները վանդալ-ենիչերիներից հալածված շարունակել են իրենց ոգորումներն ու որոնումները, աստանդական ցուպին հենված շրջել են բազմաթիվ երկրներ ու վայրեր՝ իրենց գոյավիճակը պահպանելու համար: Այդ հարաշարժ քաղաքականների մեջ են եղել նաև Այվազյանների նախապապերը: Հովհաննես Այվազովսկու պապը՝ Գրիգոր Այվազի կյանքի վերջին հանգրվանը եղել է Մոլդավիան: Փաստաթղթերից պարզվում են Այվազյանների տոհմի մեծ ճյուղավորումների, ինչպես նաև մի քանի երկրներում սփռված լինելու հանդամանքները:

³ Վ ա հ ա ն Զ ա ր գ ա ր յ ա ն, Հիշատակարան, 1512—1533, Ե. հատոր, 1939, Կահիրե, էջ 77.

⁴ Հայկական ՍՍՍԻ պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆոնդ N 227, գործ N 299.

Նկարչի եղբայրը՝ Գարրիել արքեպիսկոպոս Այվազյան-Այվազովսկին, 1877 թ. դեկտեմբերի 12-ին Սուլավա բազաբի իր ազգական Պողոս Այվազին գրած պատասխան նամակում իր խոր երախտիքն է հայտնում իրենց տոհմի «ազգաբանական ճշտագրության» վերսրերյալ հավաքած նյութերի ու տվյալների ուղարկման համար:

1877 է. ը յոսմսէ վերջ
 յունկարչի յունկարչի ասոյ շէքէն
 Կրտսերի: 22

17 Գէորգ աշխարհումբ հրէի յօշուաբան - 1
 20 Գեորգ յարստումբ Գարսի մարտի
 22 Կարգօ Վրէժումբումբ արտի յօշուաբան 1
 25 յօշուաբան շահբումբ հրէի շահբան 1

Այդ նամակում ուղղակի ասված է. «Այսու ամենայնի շիբ երկբայութիւն զի Այվազըն (կամ Հայվազը) Կալիցիոյ և Պուրովինայի և Խրիմու ազգակիցք են միմեանց՝ ոչ հեռաւորք և մեզ ոչ սակաւ ուրախութիւն է և պարծանք ազգակցութիւն այսպիսի, որովհետև ըստ զանազան տեղեկութեանց հասելոց առ մեզ ամենեքեանք որք գտանին ի կողմանսդ այգու անուանակոչութեամբ են արք պատուականք, նշանաւորք և գովելիք ըստ բազում գլխոց»⁵:

Այսպիսով, պարզվում է, որ Դալիցիայի, Բուրովինայի, Մուրավիայի և Ղրիմի Այվազյանները մերձավոր ազգակիցներ են եղել:

Նկարչի հոր Մուրավիայից Ռուսաստան անցնելու, Թեոդոսիայիում բնակություն հաստատելու, ինչպես նաև նրա անվան ու ազգանվան փոփոխման մասին չափազանց կարևոր տեղեկություն է պահպանվել Գարրիել Այվազովսկու մի այլ նամակում, որը գրված է 1877 թ. մարտի 25-ին և ուղարկված է իր ազգական Պողոս Այվազին, այնտեղ նշված է. Քաթան Այվազի մանկությունը անց է կացել Մուրավիայում, երբ անցել է Ռուսաստան, Քայթանը դարձել է Կոստանդին, իսկ Այվազ (կամ Հայվազ) ազգանունը փոխվել է Այվազովի: Սակայն ի տարբերություն մյուս Այվազով ազգատոհմերի, որ այն ժամանակներում գոյություն ունեին Ռուսաստանում, իր ազգանվանը ավելացրել է լեհական «սկի» վերջավորությունը, այսպիսով կոչվել է Այվազովսկի:

Նամակում այդ մասին ասված է. «Քայթան Այվազի մանկութիւն անցած է Մուրավիա և անտի ի Ռուսաստան, վասն զի այս Քայթան Ռուսաստանի մեջ առեալ է Կոստանդին Գրիգորեան (այսինքն Գրիգորի որդի) անունը, իսկ իւր Այվազ կամ Հայվազ ազգանունը անոր համար հարկ համարել է անել Այ-

5 Հայկական ՍՍԿ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, դ. 320, թ. 101:

վազովսկի, որ Ռուսաստանի մեջ այն ժամանակները կային Այվազով անունով ուրիշ ազգատոհմեր:

Նա է մեր հանգուցեալ հայրը Կոստանդին-Գէորգ Այվազովսքի, որ վախճանված է 1841-ին»⁶:

Այստեղ ամենակարևորը վերջին սյարբերությունն է, ուր առանձնակի շեշտված է. «Նա է մեր հանգուցեալ հայրը Կոստանդին-Գէորգ Այվազովսքի, որ վախճանած է 1841-ին»: Ինչպես տեսանք առաջին փաստաթղթում, որը գրված է 1817 թ., նկարչի հայրն արձանագրված է «Գէորգ Այվազյան», իսկ այս փաստաթուղթը, որը գրված է նրանից ուղիղ 60 տարի հետո, գալիս է լիովին հաստատելու նորահայտ փաստաթղթի իսկությունը և միաժամանակ պարզաբանում է այն փոփոխությունները, որոնք հետագայում կրել են նկարչի հոր անունն ու ազգանունը:

Գէորգ-Կոստանդին Գրիգորի Այվազովսկու մանկությունն ու պատանեկությունը անցել է Գալիցիայում, Վալախիայում և ապա Մոլդավիայում: Շրջագայելով մի շարք վայրեր, նա սովորել ու լավ է իմացել թուրքերեն, հունգարերեն, գերմաներեն, հրեերեն, հայերեն լեզուները: Փաստաթղթերից սյարգվում է, որ մինչև Ռուսաստան անցնելը, նա հայտնի է եղել նաև Քայթան-Այվազ, ինչպես և «Հայվազ» անվանմամբ:

Հատկանշական է, որ տակավին XIX դ. առաջին քառորդում՝ Թեոդոսիայում գտնված միջոցին «Հայվազ» ազգանունը ռուսական տառադարձությամբ ու արտաբերմամբ «Գայվազ» և ապա «Գայվազով» էր հնչվում ու գրվում, երբ դրան ավելանում է լեհական «սկի» վերջածանցը, ապա այն հիմնովին վերափոխվում է, դառնում «Գայվազովսկի» (Гайвазовский): Ահա այս վերջին ազգանունն էր, որ կրում էր պատանի նկարիչ Հովհաննեսը, երբ սկսում է դրպրոց հաճախել: Հանրահայտ է, որ հանձարեղ ծովանկարիչը մինչև 1840 թ., որը դեռ չէր կատարել իր առաջին ուղևորությունը արտասահմանյան երկրները, կրում էր «Գայվազովսկի» ազգանունը, և այսպես էլ գրանցված էր նրա պաշտոնական փաստաթղթերում:

Հայ ժողովրդի հանձարեղ զավակ, աշխարհահռչակ ծովանկարիչը 1840 թ. իր ազգանվան մեջ մի նոր բարեփոխություն ևս մտցրեց: Ազգանվան սկզբից նախկինում ավելացած «Հ» տառը, որը ռուսերենում «Գ» տառով էր փոխարինվել, բոլորովին դուրս է հանում: Ընդ որում փաստաթղթերով ձևակերպված և քաղաքացիական իրավունք ստացած «Գայվազովսկի»-ն վերափոխվում է «Այվազովսկի»-ի: Այնուհետև, արշարհահռչակ ծովանկարիչը մինչև իր մահը՝ 1900 թ. ստորագրում է իվան Կոստանդինովիչ Այվազովսկի կամ Հովհաննես Կոստանդինի Այվազյան⁷:

6 Հայկական ՍՍԽ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 320, թերթ 42:

7 «Արարատ լեռան հովիտը» պատկերի տակ (1882 թ.) մի կողմում հանձարեղ նկարիչը ստորագրել է «Այվազեան», իսկ մյուս կողմում ռուսերեն՝ «Айвазовский»: (Այս մասին տե՛ս նաև Մ. Սարգսյանի «Հայկական և ռուսական կերպարվեստի կապերը 19—20-րդ դդ.», Երևան, 1953 թ., էջ 108: Հովհաննես Այվազովսկին մի շարք պատկերների տակ, ինչպես և հայերեն գրած բազմաթիվ նամակներում ստորագրել է հայերեն. «Հովհաննես Այվազովսկի» կամ հենց «Օվաննես Այվազեան»:

Г. Г. Арутюнян

О ПРОИСХОЖДЕНИИ ОВАНЕСА АЙВАЗОВСКОГО И ВИДОИЗМЕНЕНИИ ЕГО ФАМИЛИИ

Резюме

Несмотря на многочисленные исследования о великом художнике И. К. Айвазовском, история происхождения его недостаточно изучена и освещена, а в некоторых случаях даже искажена.

На основании недавно обнаруженных архивных документов, автор статьи освещает некоторые моменты происхождения Айвазовского и видоизменения его фамилии.

По мнению автора, предки великого художника произошли из столицы армянских Багратидов г. Ани, а когда он подвергся нашествиям варварских племен, они переселились в Крым, затем в Галицию и Молдавию.

В 1774 г. Крым присоединился к Российской империи, предки художника вернулись туда, а потом, в 1812 г. окончательно поселились в Феодосии.

В книге записи метрических свидетельств феодосийской армянской церкви, обнаруженной в ЦГИА Арм. ССР, в списке детей, крещенных 17 июля 1817 г. записано «Сын Геворка Айвазяна Ованес».

Таким образом ясно, что до 1817 г. фамилия отца художника была «Айвазян», а имя «Геворк».

О видоизменении армянской фамилии Айвазян на Айвазовский (с польским окончанием), а имени Геворк на Константина дают объяснение указанные архивные документы.

Так, в письме брата художника, известного ученого, архиепископа Габриэла Айвазяна-Айвазовского от 25 марта 1877 г., говорится, что их отца Геворка звали Кайтан, затем Геворк Айваз (Гайваз) и он происходил из рода Айвазов, переселившихся из коренной Армении на запад, вначале в Галицию, затем в Молдавию, откуда в начале XIX в. переселился в Крым. Геворк Айвазян, занимавшийся в это время торговлей в отличие от других многочисленных Айвазовых, проживающих в России, изменил свою фамилию, прибавив окончание «ский» и стал называться Гайвазовским, сохранив букву «h», то есть «Г», а имя его Геворк-Кайтан стало «Константин».

В 1840 г. художник отбросил первую букву и стал Айвазовским, а имя «Иван» является точным переводом армянского имени «Ованес».

Однако и в дальнейшем под многочисленными своими письмами на армянском языке и под некоторыми картинами он подписывался Ованес Константинович Айвазовский—Айвазян.